Հինգերորդ հաղորդում

Քրիստոսը՝ որպես Աստծու պատկերը և որպես գանձը

Գրվածքների ընթերցում. Բ Կրթ 4:4, 7, Կող 1:15, Եբր 1:3, Հվի 1:18

I. Բ Կրթ 4:4-7-րդ խոսքերը ցույց են տալիս, որ մենք կարող ենք վայելել Քրիստոսին՝ որպես Աստծու պատկերի ու որպես գանձի.

Ա. Աստծու պատկերը վերաբերում է Քրիստոսին՝ որպես մեր արտաքին արտահայտությանը, իսկ գանձը վերաբերում է Քրիստոսին՝ որպես մեր ներքին բովանդակությանը:

Բ. Մենք պետք է Քրիստոսին՝ որպես Աստծու պատկերի, կրենք արտաքուստ, և մենք պետք է Քրիստոսին՝ որպես գանձի, ունենանք ներքուստ:

Գ. Մենք պետք է մտնենք Քրիստոսի հարուստ ու լիակատար վայելքի մեջ:

Դ. Եբր 1:3-ի համաձայն՝ Քրիստոսն Աստծու փառքի լուսափայլությունն է. այլ կերպ ասած՝ Նա Աստծու պատկերի արտահայտությունն է:

Ե. Քրիստոսը՝ որպես Աստծու պատկերը, Աստծու ազդարարումն է, արտահայտությունը. Նա ազդարարում է Աստծուն և արտահայտում է Աստծուն՝ Հվի 1:18:

Զ. Կող 1:15-ը խոսում է Քրիստոսի՝ որպես «անտեսանելի Աստծու պատկերի» մասին. այստեղ պատկերը ֆիզիկական կերպարանք չէ, այլ Աստծու էության արտահայտությունը՝ Աստծու բոլոր հատկանիշներում և առաքինություններում:

Է. Մեր միտքը պետք է այն աստիճան նորոգվի, որ պարզորեն տեսնենք Քրիստոսին՝ որպես Աստծու պատկերի՝ Հռմ 12:2:

II. Բ Կրթ 4:4-ում Պողոսը խոսում է «Քրիստոսի, ով Աստծու պատկերն է, փառքի ավետարանի լուսավորման» մասին.

Ա. Այս խոսքում Պողոսը նաև տեղեկացնում է, որ այս դարաշրջանի աստվածը՝ աշխարհի կառավարիչը (Հվի 12:31, 14:30, 16:11, Եփս 2:2), կուրացրել է անհավատների մտքերը.

1. Այս դարաշրջանի աստվածը Սատանան է՝ ներկա դարաշրջանի կառավարիչը, որը տիրում է այսօրվա աշխարհին և, մարդկանց միտքն ու մտքերը կուրացնելով, ձգտում նրանց երկրպագությունը կորզել՝ Բ Կրթ 4:4:
2. Բոլոր մարդիկ այսօր, պարզունակ մշակույթի տեր լինեն, թե բարձր մշակույթի տեր, կուրացվել են այս դարաշրջանի աստծու կողմից:
3. Մենք պետք է աղոթենք. «Տե՛ր, ես ապավինում եմ Քեզ այն հարցում, որ Դու այս դարաշրջանի աստծուն պարտության կմատնես: Ես չեմ ուզում Քեզնից բացի որևէ մեկի կամ որևէ բանի երկրպագել»:

4. Եթե այսկերպ աղոթենք, աստվածային լույսը կշողա, և մենք հայտնություն կստանանք:
5. Եթե թողնենք մեր պատկերացումներն ու մեր սիրտը Տիրոջը դարձնենք (3:16), ծածկոցները կվերցվեն, և այս դարաշրջանի աստվածը մեր էության մեջ ոչ մի հիմք չի ունենա:

Բ. Քրիստոսի ավետարանը Նրա փառքի ավետարանն է, որը լուսավորում ու շողում է:

Գ. Աստված անտեսանելի է, բայց Քրիստոսը՝ Աստծու սիրո Որդին, ով Աստծու փառքի լուսափայլությունն է և Նրա հնքնության դրոշմը (Եբր 1:3), Նրա պատկերն է, որն արտահայտում է այն, ինչ Նա է:

Դ. Աստծու պատկերը Կոս 1:15-ում վերաբերում է Աստծու արտահայտությանն ու Աստծու լեցունությանը, այսինքն՝ հենց Իրեն՝ Քրիստոսին:

Ե. «Անտեսանելի Աստծու պատկերը» արտահայտությունը ենթադրում է, որ թեև Աստված Ինքն անտեսանելի է, Նրա պատկերը տեսանելի է՝ խ. 15:

Զ. Անտեսանելի Աստված տեսանելի պատկեր ունի, և այս պատկերը Քրիստոսն է.
1. Հվի 1:18-ում ասվում է. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել. միածին Որդին, ով Հոր ծոցում է, Նա՛ ազդարարեց Նրան»:
2. Թեև Աստված անտեսանելի է, Նա արտահայտված է կենդանի անձով, այսինքն՝ Հիսուս Քրիստոսով, Աստծու Որդով՝ 3:16:

III. «Բայց մենք այս գանձը հողե անոթներում ենք պարունակում»՝ Բ Կրթ 4:7ա.

Ա. Քրիստոսը՝ որպես մեր մեջ եղող կենդանարար Հոգին, Նա է, ով շողում ու աշխատում է. սա այն գանձն է, որ մեր մեջ ունենք:

Բ. Աստծու՝ մեր սրտերում շողալը (խխ. 4, 6) մեր մեջ գանձ է բերում՝ փառքի Քրիստոսին, ով Աստծու մարմնավորումն է՝ մեր կյանքը և ամեն ինչը լինելու համար:

Գ. Մեր սրտերում շողալու շնորհիվ մենք գանձ ունենք, որը հրաշալի, թանկագին ու սքանչելի է:

Դ. Մեր մեջ եղող այս գանձը՝ մեր՝ հողե անոթներիս մեջ ներքնակվող Քրիստոսը, մատակարարման աստվածային ակունքն է քրիստոնեական կյանքի համար՝ խ. 7:

Ե. Բ Կրթ 4:7-ի «այս գանձը» վերաբերում է 6-րդ խոսքին, որտեղ Պողոսը խոսում է Հիսուս Քրիստոսի երեսի մասին.
1. Մեր սրտերում Աստծու շողալը մեզ լուսավորում է, որպեսզի ճանաչենք Աստծու փառքը Քրիստոսի երեսին:
2. Աստծու փառքը՝ դրսևորված Հիսուս Քրիստոսի երեսին, փառքի Աստված է՝ արտահայտված Հիսուս Քրիստոսի միջոցով. Նրան ճանաչել նշանակում է ճանաչել փառքի Աստծուն՝ խ. 6:

3. Բ Կրթ 4:6-ում «երես» բառը հունարենում բառացի նույնն է, ինչ 2:10-ում «անձ» բառը, որը նշանակում է աչքերի շուրջը եղող մաս, հայացք՝ որպես ներքին մտքերի ու զգացմունքների արտացոլում, որում երևում և դրսևորում է ողջ անձը:
4. Սա նշանակում է, որ եթե Հիսուսի երեսի արտահայտությունը չունենանք, Նա չի կարողանա իրականության մեջ մեզ համար գանձ լինել.
   ա. Մենք չենք զգա, որ մեր ներսում գանձ ունենք, մինչև որ Հիսուս Քրիստոսի երեսը չտեսնենք:
   բ. Մի կողմից՝ մենք կարող ենք ազդարարել, որ հողե անոթներ ենք և որ Քրիստոսը գանձ է մեր ներսում:
   գ. Մյուս կողմից՝ մենք պետք է տեսնենք, որ Քրիստոսի մեզ համար գանձ լինելը մենք կզգանք միայն այն ժամանակ, երբ ապրենք Նրա ներկայության մեջ՝ նայելով Նրա էության արտացոլանքին՝ խ. 10:

Զ. Աստծու՝ Իր մտահղացումն իրականացնելու ճանապարհին առաջին քայլը մարդուն ստեղծելն էր որպես հողե անոթի, որը կպարունակեր Աստծուն՝ որպես կյանքի՝ Ծնդ 2:7.
1. Աստված մեզ ընտրեց, որպեսզի մենք Եռամեկ Աստծով լցված պատվի անոթներ լինենք՝ Հռմ 9:21-23, Բ Կրթ 13:14:
2. Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ Աստված ուզում է, որ հավատացյալները՝ որպես անոթներ, սիրեն Իրեն և իրենց բաց պահեն Իր համար՝ Հռմ 9:21, 23, Բ Կրթ 3:16:
3. Եթե մեր էության խորքում մենք բաց չենք Տիրոջ համար, Նա չի կարող Իրեն բաշխել մեր մեջ և Իր տունը հաստատել մեր սրտում՝ Ա Կրթ 2:10:
4. Բաց անոթը այլ բան չի անում՝ բացի իրեն բաց պահելուց, որպեսզի լցվի Աստվածային Երրորդության աստվածային բաշխմամբ՝ Բ Կրթ 13:14:
5. Երբ Տերը լցնում է մեզ, Նա ամեն ինչ անում է մեր փոխարեն՝ Եփս 3:19:

Է. Մենք տկար ենք, քանի որ հողե անոթներ ենք. սակայն մեր՝ անոթներիս ներսում եղող գանձը մեզ թույլ է տալիս Տիրոջ համար բաց մնալ և Նրան հնարավորություն ընձեռել անելու այն ամենը, ինչ ուզում է անել. սա պատշաճ և իսկական քրիստոնեական կյանքն է՝ խ. 17, Գղտ 2:20:

IV. «Որպեսզի զորության գերազանցությունն Աստծուց լինի, այլ ոչ թե մեզնից»՝ Բ Կրթ 4:7բ.

Ա. Այն, որ մենք հողե անոթներ ենք, ապացուցում է, որ զորության գերազանցությունն Աստծուց է, այլ ոչ թե մեզնից.
1. Ինքներս մեր մեջ մենք ոչ այլ ինչ ենք, քան հողե անոթներ. մենք մեղսալի, ընկած ու ցածր ենք:
2. Ուստի մենք ճշմարտությունը դրսևորելու և ավետարանի փառքը ճառագելու զորություն չունենք՝ խ. 4:

Բ. Թեև մենք անարժեք հողե անոթներ ենք, Աստված Իր շողալով մեր մեջ ներդրեց թանկագին գանձը.

1. Այժմ այս գանձը դառնում է զորության աղբյուրը, որը մեզ եռանդ է հաղորդում և հնարավորություն տալիս ճառագելու Աստծու փառքն ու դրսևորելու ճշմարտությունը՝ խ. 7ա:
2. Այս գանձը զորություն ունի, և այդ զորությունը գերազանց է:

Գ. Արտաքուստ մենք հողե անոթներ ենք, բայց ներքուստ մենք անգին գանձ ունենք՝ Քրիստոսին՝ որպես պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու մարմնավորմանը, ով համաբովանդակ կենդանարար Հոգի է դարձել՝ Ա Կրթ 15:45բ:

Դ. Մեր ներսում մենք ունենք Քրիստոսին՝ որպես հրաշալի գանձի. արտաքուստ կրում ենք Քրիստոսին՝ որպես Աստծու պատկերի՝ Եռամեկ Աստծու արտահայտության՝ Բ Կրթ 4:4:

Ե. Երբ հավատացին Տեր Հիսուսին, մենք ստացանք ավելին, քան սոսկ Փրկագնիչի. մենք ստացանք տիեզերքում եղող ամենագերազանց Անձին:

Զ. Մենք պետք է փորձառաբար ապրենք ու վայելենք Քրիստոսին՝ որպես գանձի, ներքուստ և պատկերի՝ արտաքուստ:

© 2024 Living Stream Ministry